

Զ. ՍՏԱՅՆԲԵՔԻ «ՓԱՂԱՆԳԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ» ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ ՆՐԱ «ՑԱՍՄԱՆ ՈՂԿՈՒՅՁՆԵՐԸ» ՎԵՊՈՒՄ*

Զոն Ստայնբեքի «Ցասման ողկույզները» վեպի լույս ընծայումը (1939թ.) լայն արձագանք գտավ ոչ միայն գրական շրջանակներում, այլև քաղաքական: 1940 թվական թևակոխող Ամերիկայում այն իրական իրարանցում առաջացրեց՝ սկիզբ դնելով բուռն գրական բանավեճի, որը շարունակվում է ցայսօր: Շատերը վեպն ընկալեցին որպես սոցիալական ընդվզման կոչ և փաստագրություն՝ կարծես մի կողմ թողնելով դրա (հանիրավի անտեսելով) գեղարվեստական արժեքն ու նշանակությունը: XX դարի երկրորդ կեսի լավագույն գրաքննադատներից մեկը՝ Հարոլդ Բլումը, իր համախոհների հետ մի իսկական ռազմարշավ սկսեց: Բանը հասավ նրան, որ ամերիկացի գրականագետ Լեսլի Ֆիդլերը Զոն Ստայնբեքի վեպի լույսընծայման հիմնամյակը տոնող ուսանողների հետ հրապարակային բանավեճ սկսեց՝ վեպն ու դրա հեղինակին անվանելով՝ «անհուսորեն սենտիմենտալ, մշուշոտ փիլիսոփայությամբ և անորոշ քաղաքականությամբ»¹: Ամերիկացի գրողին անգամ մեղադրեցին կոմունիզմին հարելու մեջ, և նրա գիրքը հալածվեց ոչ միայն Ամերիկայում, այլև Սովետական Միությունում, ի դեպ, նույն ճակատագրին արժանացավ նաև ռեժիսոր Դերիլ Ֆ. Չանուկի համանուն ֆիլմը՝ նկարահանված 1940 թ.-ին, որն այժմ համարվում է քսաներորդ դարի ամերիկյան լավագույն ֆիլմերից մեկը: Եվ նույն թվականին էլ վեպն արժանացավ Պուլիցերյան մրցանակի:

Այսօր, ըստ ամերիկացի որոշ գրականագետների, Ստայնբեքի վեպերը շատ ավելի մեծ պահանջարկ են վայելում, քան Ֆոլքների և Հեմինգուեյի ստեղծագործությունները: Ամերիկյան նոր գրաքննադատությունը ազատագրվեց քաղաքական նեղմիտ շրջանակներից՝ ի վերջո տեսնելով ստայնբեքյան յուրահատուկ ձեռագիրը և նրա վեպի բազմանկյունությունն ու խորը հոգեբանական շերտերը: «այնուամեն-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 11.02.2019:

1 A John Steinbeck Encyclopedia, edited by Brian E. Railsback, Michael J. Meyer, «Greenwood Press, London, 2006, p.133

նայնիվ, տեքստային վերլուծության մեթոդի ընդլայնումը՝ ներառյալ փիլիսոփայությունը, հոգեբանությունը և քաղաքականությունը, թույլ է տալիս տեսնել վեպի բազմաբարդությունը և հիմնավորում դրա բարձր վարկանիշը գրական ասպարեզում: Վերոգրյալ ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ *Ողկոյզները* («Ճասման ողկոյզները» վեպը, հեղ.) շատ ավելին է, քան զգացմունքային պաթոսով լի մի ստեղծագործություն, որի նպատակը որոշակի քաղաքական կամ սոցիալական խնդիրների վեր հանումն է: Սրա փոխարեն գրաքննադատները հայտնաբերեցին, ինչպես նրանցից ոմանք են ասում, կանխամտածված հավասարակշռություն, քանի որ Ստայնբեքը համաչափություն է դրսևորել վեպի կերպարակերտման, կառուցվածքի և լեզվի հարցերում՝ կանխելու համար պատումի առանցքի հնարավոր ճյուղավորումներն ու թյուրընկալումները²:

Ձ. Ստայնբեքին սխալմամբ կոմունիստ անվանողները, վստահաբար տեղյակ չեն 1936 թ.-ին գրված, սակայն մինչ օրս էլ լույս չընծայված նրա «Փաղանգի իրականություն» («Argument of Phalanx») հոդվածի մասին (ձեռագրի ֆոտոպատճենը հասանելի է աշխարհի մի շարք գրադարաններում), որտեղ հեղինակը ներկայացրել է մարդու հոգեբանության և սոցիալական վարքի վերաբերյալ իր յուրահատուկ տեսությունը, որն անվանում են «փաղանգի տեսություն» կամ «խմբի տեսություն»՝ քննարկման առարկա դարձնելով մարդու վարքը որպես անհատ և նույն անհատի վարքը մարդկային որոշակի խմբի ներսում խմբի անդամի «պարտականությունը» ստանձնելուց հետո: Հեղինակն ընդգծում է, որ անհատի և որևէ խմբում գործող մարդու միջև կան և՛ նմանություններ, և՛ տարբերություններ, նաև փաստում է, որ անհատը խմբի անբաժանելի մասն է, սակայն իրավիճակից կախված մարդը գործում է լիովին տարբեր կերպ: Ստայնբեքի այս նոր տեսությունը կարմիր թելի պես անցնում է նրա մի շարք ստեղծագործություններում՝ «Դրախտի արոտավայրերը» («Pastures of Heaven», 1932), «Երկարաձիգ հովիտը» («The Long Valley», 1938) պատմվածքների ժողովածուներում, «Թորթիլա Ֆլեթ» («Tortilla Flat», 1935) և «Մկների և մարդկանց մասին» («Of Mice and Men», 1937) վիպակներում

2 A John Steinbeck Encyclopedia, edited by Brian E. Railsback, Michael J. Meyer, «Greenwood Press, London, 2006, p.132-133.

և «Մի երկմտելի ճակատամարտում» («In Dubious Battle», 1936) և «Ցասման ողկույզները» («Grapes of Wrath», 1939) վեպերում:

Իր «Փաղանգի» և մի շարք այլ տեսությունները («Ոչ թեոլոգիական գիտակցություն» և այն) Ստայնբեքը հղացել է՝ հիմնվելով մի շարք գրողների (Է. Պո, Լ. Հոթորն), հոգեբանների (Գ. Լե Բոն, Զ. Ֆրոյդ, Կ. Յունգ, Ու. Մլըք Դուգլաս), սոցիոլոգների և սոցիալ-փիլիսոփաների (Ու. Թրոթթեր, Զ. Բուդին) ու կենսաբանների (Ու. Ռիտգեր, Ու. Կ. Օլլի) ստեղծագործությունների և աշխատությունների հիման վրա: Մասնավորապես, նրա «փաղանգի տեսության» հիմքում շվեդական ծագմամբ ամերիկացի սոցիալ-փիլիսոփա Զոն Բուդինի «Սոցիալական գիտակցություն» և ամերիկացի նշանավոր կենդանաբան և էկոլոգ Ուարդեր Կ. Օլլիի «Կենդանիների ագրեգացիա» աշխատություններն են, որոնք Ստայնբեքին խորհուրդ էր տվել կարդալ Բիչըրդ Օլբին:

«Փաղանգի տեսությունը» հեղինակի ժամանակի իրականության ճշգրիտ արձագանքն ու հետևանքն է, երբ պետությունը, որ դեռևս խաղալիք էր բանկային օրեցօր հզորացող համակարգի և նոր ձևավորվող հարստահարիչ բիզնես մոնոպոլիաների ձիրքներում, ի զորու չէր պաշտպանելու իր հասարակ քաղաքացիների շահերն ու նրանց բացի միավորվելուց և ընդվզելուց այլ բան չէր թողել. «...նա (Ստայնբեքը, հեղ.) շոպյորեն կիրառել է իր թեորիան («փաղանգի տեսությունը», հեղ.) առաջ քաշելով այն գաղափարը, որ ուժի դիմելով խումբն ունակ է ակնթաթային սոցիալական փոփոխություն իրականացնել: Այս գաղափարով են սնվել Ստայնբեքի ամենազորեղ վեպերը, հատկապես Մեծ դեպրեսիայի տարիներին, վեպեր, որոնք կապիտալիզմի դեմ պայքարող աշխատավորների կամ ռազմական բռնաճնշումների ենթարկվող գաղթականների մասին են»³: Ստայնբեքի այս նոր տեսությունը նաև ֆաշիզմի դեմ էր ուղղված, որն արդեն ծաղկում էր ապրում թե՛ Իտալիայում, թե՛ Գերմանիայում և թե՛ Ճապոնիայում: Եվ ակնհայտ էր, որ պետական ամբողջատիրական այս փթթող համակարգի մարտահրավերին առանձին անհատները չէին դիմակայել, ուստի անհրաժեշտ էր ստեղծել միավորումներ, ինչը կենսական անհրաժեշտություն էր՝ պայմանավորված և՛ քաղաքական և՛ սոցիալական իրավիճակով:

3 Steinbeck Review, Vol. 10, No. 1, «The Pennsylvania State University», «University Park», 2013, page 31.

Սա մի փոքրիկ հատված է Ջ. Ստայնբեքի այդպես էլ չտպագրված «Փաղանգի իրականություն» հոդվածից, որում համապարփակ ներկայացվում է ամերիկացի հեղինակի տեսության բովանդակությունը. «Մարդիկ բովանդակ անհատներ չեն, այլ միավորներ մեկ այլ, ավելի խոշոր էության՝ փաղանգի մեջ: Մարդու մարմնի ներսում կան միավորներ, բջիջներ (մի մասը խիստ առանձնահատուկ, մյուսները համակարգված), որոնք օժտված են իրենց առանձին էությամբ և կյանքով, որոնք մահանում են և փոխարինվում, տառապում և սպանվում: Միլիարդների հասնելով՝ դրանք կազմում են մարդ, մի նոր անհատ: Բայց մարդն ավելին է, քան բջիջների ամբողջությունը և նրա բնությունը լոկ իր բջիջների հանրագումարը չէ: Նա օժտված է իր բջիջների համար նոր և տարօրինակ մի էությամբ»:

Ստայնբեքի «Ցասման ողկույզները» սոցիալ-փիլիսոփայական վեպում «փաղանգի տեսությունը» ակներև է ոչ միայն տարբեր հերոսների զրույցներում ու նրանց գործողություններում, այլև հենց վեպի կառուցվածքում, բավականին հետաքրքիր ձևով, որը հիշեցնում է մոդեռնիստների սիրելի գրելատեխնիկան՝ «գիտակցության հոսքը»: Օրինակ՝ վեպի քսաներեքերորդ գլուխը անդեն հերոսների ընդհանուր մտքերն ու զրույցներն են, որտեղ բացակայում է որևէ հերոսի անուն կամ նրա անհատականությունը բնորոշող հատկանիշ կամ դետալ: Ի դեպ, այս գլխում տեղ գտած մտքերն ավելի հատուկ են ամբոխին, քան Թոմի և հատկապես Քեյսիի նման անհատականություններին, և սրանից հասկանում ենք, որ ստայնբեքյան փաղանգը բազմաշերտ է և պետք է առաջնորդ ունենա, այլապես «նոր» կրոն կերտել ի գորու չի լինի: Ամբոխը կամ «խումբը» ավելի շատ ձգտում է մոռացության, քան պայքարի և ստեղծագործության. «Եվ միշտ, երբ փող է լինում, կարելի է լավ խմել: Սուր անկյունները հարթվում են, ինքդ ջերմանում ես: Սենության զգացումը վերանում է, քանի որ ավելի դյուրին է երևակայությունն ընկերներով բնակեցնել, նաև դյուրին է թշնամիներին գտնելն ու ոչնչացնելը»⁴, դրան անպայման հոգևոր հովիվ է անհրաժեշտ, գաղափարական ողնաշար:

4 Steinbeck John, "Argument of Phalanx". սույն մեջբերումն արված է Ջ. Ստայնբեքի հեղինակած, սակայն չտպագրված հոդվածի ձեռագրից, այդ պատճառով էլ հղում չի տրվում: Բնագրից թարգմանությունը՝ հոդվածի հեղինակի:

5 Ստայնբեք Ջոն, «Ցասման ողկույզները», «Ձանգակ» հրատ., Երևան, 2017թ., էջ 342:

Ստայնբեքյան «խումբը» բազմաշերտ է, այն չի կարելի ընկալել որպես անգիտակից և հոգևոր տհասությանը տառապող մարդկանց խմբավորում ու միավորում: Այս միավորման մեջ են նաև խորը գիտակցությամբ օժտված և որոշակի հոգևոր ու մտավոր ճանապարհ անցած անհատներ, որոնք անգիտակցականի, նաև գիտակցականի մակարդակում սկսում են հասկանալ, որ բոլորի բարեկեցությունն ավելի կարևոր է, քան մեկ անհատինը, և որ վրահաս չարիքի դեմ միայնակ պայքարելն անհնար է. այն տանում է հիմնային-բովանդակ կործանման:

«Ցասման ողկույզները» վեպում ստայնբեքյան «փաղանգի տեսությունը» մեզ է ներկայանում միաժամանակ մի քանի հերոսի միջոցով և պատկերմամբ: Առաջինը Ջիմ Քեյսին է, որն ընթերցողին է ներկայացնում վերոգրյալ գաղափարի տեսական մասը, նաև սկսում է գործել, սակայն, երբ փորձում է գաղթական աշխատողներին օգնել կազմակերպվել և ապստամբել, սպանվում է: Քեյսին տեղի քարոզիչն է եղել, «վերապատվելի Ջիմ Քեյսին, անկեզ մորենին», ինչպես ինքն է իր մասին ասում, սակայն հրաժարվել է իր տիտղոսից և գործից, խոստովանում է նա՝ «Այժմ պարզապես Ջիմ Քեյսին եմ: Եվ զուրկ եմ երանությունից: Մեղսավոր մտքերն են համակել ինձ, մեղսավոր, սակայն ողջամիտ⁶»: Քեյսին ապրել է քրիստոնեական կյանքով, եղել է լավ քարոզիչ, մանրամասնորեն յուրացրել և գյուղի համայնքին է փոխանցել կյանքի ճշմարտություն Ավետարանը՝ «Էնքան եմ ձեռքս առել ու թերթել, մինչև լրիվ քրքրվել է⁷», սակայն այդ ամենը նրան դարձրել է եսականտրոն և մեկուսացրել հասարակությունից, իսկ կնոջ հետ բնական սեր-մերձեցումը նրա հոգում մեղքի զգացում ու ներքին հակասություններ են ծնել, ինչին ապաշխարանքն ու աղոթքները չեն օգնել: Եվ նա ստիպված հրաժարվել է կրոնից, հրաժարվել է, որովհետև ազնիվ է իր և Աստծո առաջ, չի կարող կեղծավոր լինել: Բայց միևնույն ժամանակ Քեյսին հստակ զգում է իր ներսից եկող ազդակը, սակայն դեռևս չի կարողանում իր մտքում ձևակերպել դրա էությունն ու իմաստը, ինչն արտահայտված է «բառեր գտնելու» անկարողության խորհրդանի-

6 Ստայնբեք Ջոն, «Ցասման ողկույզները», «Հանգակ» հրատ., Երևան, 2017թ., էջ 24-25:

7 Ստայնբեք Ջոն, «Ցասման ողկույզները», «Հանգակ» հրատ., Երևան, 2017թ., էջ 26:

շով՝ «Իհարկե, երբեմն հոգիս լուսավորվում է, բայց բառեր չեն գտնում, որ քարոզեմ: Իմ կոչումն է մարդկանց առաջնորդելը, բայց դեպի ուր՝ չգիտեմ», ազդակ, որ ավելի ուշ նրա համար բացելու է մի նոր, շատ ավելի գործնական ու կիրառելի «կրոնի» դարպասներ և ստիպելու է առաջնորդել մյուսներին:

Ջիմ Քեյսիի Քրիստոսի կերպարն է, զոհաբերվողը, որ հայտնագործում է ու բացահայտում նոր ճշմարտություն, սակայն պետք է զոհաբերի ամենաթանկը՝ իր կյանքը՝ այդ ճշմարտությունը իրագործելու համար: Իսկ առանց հինն իմանալու, դրա մեջ խորամուխ լինելու և դրանով ապրելու հնարավոր չէ այն ժխտել և քայլ անել դեպի նորը, ավելի գործնականը: Սա նման է Քրիստոսի կողմից իր հոր պատգամները փոփոխելուն, «Նոր կտակարանի» ստեղծմանը: Ջիմ Քեյսին էլ իր հորը՝ Քրիստոսին է հակադրվում, նորովի իմաստավորում վերջինիս գաղափարներն ու կյանքի ու գոյության հանդեպ մոտեցումները, սակայն իրականում շարունակում է հենց Քրիստոսի ուղին:

Հետաքրքրական է, որ Քեյսիի համար դասական քրիստոնեությունից հիմնական վանող գաղափարը՝ մեղքի գաղափարն է, հակասությունը մարմնական-բնական-կրքալից զգացումի և զգացմունքի ու այդ ամենի մեղսական լինելու միջև. «Համ էլ ասում են, որ աղջկա հետ պառկելը սատանայական կախարդություն է: Բայց աղջիկը որքան շատ է երանության գիրկն ընկնում, էնքան արագ է դուրս թռչում և փափուկ հողի վրա պառկում: Ու մտածում էի՝ սատանան տանի, կնեբրեն, բերանիցս թռավ, սատանան ինչ գործ ունի, եթե աղջիկն էնքան է սուրբ հոգով լեցուն, որ այն պարզապես նրա քթից ու ականջներից դուրս է հորդում⁸»: Քեյսիի «հին» կրոնը տեսականորեն զորեղ է, սակայն գործնականում ձաքեր է տալիս, ինչը հերոսն իր մաշկով է զգում, զգում է կյանքի իրական-զգայական հարաբերության մեջ, սիրային ակտի ժամանակ, որը նրա համար վերածվում է բարու և չարի գաղափարի չափման միավորի և ի ցույց դնում ամենաճնշիչ մեղքի գաղափարի անանկությունը, դրա ներհակությունը առ կյանքն ու կենսականը: Քեյսիի սկզբնական արձագանքն այս հակասությանը փախուստն է, փախուստը «հին» կրոնի գաղափարներից և մեկուսացում այն հասարակությունից, որին ինքը քարոզել է մեկ բան, սակայն զգացել լի-

⁸ Ստայնբեք Ջոն, «Ցասման ողկույզները», «Ձանգակ» հրատ., Երևան, 2017թ., էջ 27:

վին այլ բան: Բայց ավելի ուշ, երբ գալիս է գործելու պահը՝ ամբողջ համայնքի ֆիզիկական գոյության համար գործնական պայքար մղելու պահը, Քեյսիի մեկուսի կյանքի ժամանակաշրջանն ավարտվում է, և նա Թոմ Ջոուզին է ներկայացնում չարչարանաց ուղիով հայտնաբերած իր «նոր» կրոնի տեսլականն ու գաղափարախոսությունը՝ «Սուրբ հոգու մասին եմ խորհել և Հիսուսի ուղու: Եվ մտածել եմ՝ «Ինչո՞ւ ենք ամեն բան Աստծու կամ Հիսուսի վրա բարդում: Գուցե բոլոր տղամարդկանց և բոլոր կանանց ենք սիրում, գուցե Սուրբ հոգին հենց մարդու հոգին է, ամբողջ մարդկության հավաքական հոգին: Գուցե բոլոր մարդիկ մի ընդհանուր, մեծ հոգի ունեն, և յուրաքանչյուրի հոգին դրա մի մասնիկն է: Նստած մտածում էի էդ ամենի շուրջ և հանկարծ հասկացա: Այնքա՛ն խորությամբ հասկացա դրա ձշմարտացիությունը, որ մինչև հիմա համոզված եմ⁹»:

Հարկ է նշել, որ Քեյսիի նշած «ամբողջ մարդկության հավաքական հոգին» ուղիղ արձագանքն է տասնիններորդ դարի ամերիկացի գրող և փիլիսոփա, տրանսցենդենտալիզմի մեծագույն ջատագով և իր ժամանակներում ծայրահեղ հայացքների տեր համարվող Ռալֆ Ուալդո Էմերսոնի տրանսցենդենտալ հոգու գաղափարի, որը վերջինս ձևավորել էր մի շարք գաղափարների, ուսմունքների և փիլիսոփայությունների ազդեցությամբ, այն է՝ հնդկական փիլիսոփայություն («Բհավատ-գիտա», «Ուպանիշադներ» և այլն) անգլիական և գերմանական ռոմանտիզմ, Յոհան Գոդֆրիդ Հերդերի և Ֆրիդրիխ Շլեյերմախերի բիբլիական քննադատությունը, Դեյվիդ Հյումի սկեպտիցիզմը և Իմանյուիլ Կանտի տրանսցենդենտալ փիլիսոփայությունը: Էմերսոնի հիմնադադափարներից մեկը՝ «Համընդհանուր հոգու» գաղափարն էր, որը հոգիների հավաքական ամբողջությունն է, և առավել է, քան անհատական հոգին: Տրանսցենդենտալիզմի մյուս կարևոր դրույթը մարդկության և բնության սկզբնական անվիճարկելի առաքինության գաղափարն է: Այստեղից էլ սկիզբ է առնում Քեյսիի համընդհանուր սերը բոլոր կանանց և տղամարդկանց հանդեպ (ինչն իր «Երգ իմ մասին» ծավալուն պոեմում բազմիցս շեշտում է տասնիններորդ դարի ամերիկացի բանաստեղծ Ուոլթ Ուիթմենը): Էմերսոնյան տրանսցենդենտալ «ես»-ն էլ դառնում է Քեյսիի հիմնած «նոր կրոնի» հիմնաքարը:

⁹ Ստայնբեք Ջոն, «Ցասման ողկույզները», «Հանգակ» հրատ., Երևան, 2017թ., էջ 29:

Ի դեպ, այս «նոր կրոնն» անչափ պրակտիկ է, ինչի մասին Քեյսին հայտնում է քիչ ավելի շուտ, Քրիստոսի անձի և սիրո մասին դատողությունների ժամանակ՝ «Ասում եմ ինձուինձ՝ «Եվ ի՞նչ է երանությունը, հոգու ցնծությունը»: Եվ պատասխանում եմ՝ «Սեր է: Ենքան եմ սիրում մարդկանց, որ մեկ-մեկ քիչ է մնում՝ սիրտս պայթի»: Իսկ հետո հարցնում եմ՝ «Իսկ Հիսուսին չե՞մ սիրում»: Մտածում եմ, մտածում և վերջապես ասում եմ՝ «Չէ, Հիսուս անունով մարդ չեմ ծանաչում: Երա մասին պատմություններ գիտեմ, բայց միայն մարդկանց եմ սիրում: Երբեմն նույնիսկ նվաղելու չափ եմ սիրում և ուզում եմ երջանկացնել նրանց, դրա համար էլ էնպիսի քարոզներ եմ կարդում նրանց համար, որոնք, իմ կարծիքով, նրանց կյանքը երջանիկ կդարձնեն¹⁰»:

Վերոգրյալ դրվագում հերոսին թվում է, թե ինքը Քրիստոսից հեռացել է, սակայն իրականում սա կատարյալ մեթոցում է, միաձուլում ու միավորում: Հենց այս վիճակն է հերոսին ստիպում ասել՝ «Հիսուս անունով մարդ չեմ ծանաչում»: Ինքն արդեն միավորվել է Հիսուսի բերած երկու գերագույն գաղափարների հետ՝ սեր և կարեկցանք, դարձել դրանց անմիջական կրողը, գործնականում այդ գաղափարների իրագործողն ու ի վերջո նաև Վարավային «փրկության ձեռք» մեկնած համակարգ-հասարակության զոհը: Բայց Քեյսիի ինքնազոհաբերությունն աննպատակ ու անհետևանք չէ: Հիսուսից անցումը Քրիստոսի տեղի է ունենում խաչելության ու հարության միջոցով, չկա խաչելություն՝ չկա Քրիստոս: Ստայնբեքը հենց այս ծանապարհով է ուղղորդում իր վեպի հերոսներին, և միայն Քեյսիի սպանությունն է հնարավոր դարձնում «նոր կրոնի» գործնական կիրառումը, որը պայմանականորեն կարելի է անվանել Քեյսիի հարությունը, նրա գաղափարի մարմնավորումը Թոմի մեջ, որն ազդարարում է նոր սկիզբ և պատրաստ է առաջնորդել ըմբոստության շարժումը: Քեյսիի համար դժվար է իր «նոր կրոնը» գործնականում կիրառել, քանի որ նա մարդկությունից և իրականությունից հեռանալու, փախուստի միջոցով է հղացել նոր գաղափարը, անհրաժեշտ է կյանքի իրականությանը ապրող անհատ, որի մեջ կմարմնավորվի «նոր կրոնի» գաղափարը՝ հարությունը: Թոմի համար խորթ են ռոմանտիկական գեղումներն ու սենտիմենտալությունը, նա գործի և իրականության մարդ է և Քեյսիին այս կերպ

¹⁰ Ստայնբեք Ջոն, «Ցաման ողկույզները», «Զանգակ» հրատ., Երևան, 2017թ., էջ 28:

է պատասխանում՝ « - Ինչի՞ մասին ես խոսում, - հարցրեց Ջոուդը: / Քեյսին վեհերոտ նայեց նրան / - Եթե ինչ-որ բան սրտիդ դիպչի, խնդրում եմ չնեղանաս, լավ: / - Ես մենակ էն ժամանակ եմ նեղանում, երբ քիթս են ջարդում, - պատասխանեց Ջոուդը: - Դե ասա՛ տեսնեմ, ի՞նչ ես բստրել¹¹»:

Եվ պատահական չէ, որ բանտում տատիկի ուղարկած բացիկի հետ կապված հումորային պատմության դրվագում Թոմ Ջոուդի անունը բանտակիցները կնքում են՝ «մեղմ Հիսուս»: Չէ՞ որ հենց Թոմն է «նոր» կրոնի հիմնադրած Քեյսի-Հիսուսի գործի շարունակողն ու «հարություն» առած Քեյսի-Հիսուսը, որը գալիս է շարունակելու քարոզչի հիմնած, սակայն իրագործման փուլում կիսատ մնացած «նոր կրոն»-ի գաղափարների գործնական կիրառությունը: Այս միտումը բովանդակ պարզորոշ երևում է ընտանիքը ստիպված լքող Թոմի և նրա մոր՝ Մա-ի հրաժեշտ-գրույցի ժամանակ, երբ Թոմը ներկայացնում է Քեյսիի գաղափարները՝ «Թոմը ծիծաղեց տագնապած. / - Երևի Քեյսին ճիշտ էր ասում՝ մարդը սեփական հոգի չունի, այլ՝ մեծ հոգու փոքրիկ մասնիկը... և... / - Եվ ի՞նչ, Թոմ: / - Եվ կարևոր չէ: Եվ ինձ անգամ մթության մեջ կզգաս: Ամենուր կլինեմ... որ կողմ նայես: Սովախար մարդիկ պայքարի կելնեն մի կտոր հացի համար, նրանց հետ կլինեմ: Ոստիկանը կփորձի ծեծել տղային, նրա կողքին կկանգնեմ: Եթե Քեյսին ճիշտ էր ասում, ուրեմն ես էլ կձչամ նրանց պես, որ էլ չեն դիմանում ու կատաղում են... կիրձվեմ երեխաների պես, որ սոված են և գիտեն, որ ընթրիքն իրենց է սպասում: Եվ երբ մերոնք կուտեն սեփական ձեռքերով ցանած հացը և կապրեն սեփական ձեռքերով կառուցած տներում, դարձյալ էստեղ կլինեմ¹²»: Եվ հանկարծ Թոմն ասես պայծառանում է: Ասես հենց իր մաշկի վրա է զգում քիչ առաջ իր կողմից թելադրվող տեսությունը՝ «փառանգի տեսությունը»: Ասես գիտակցում է, որ Քեյսիի հոգին մարմնավորվել է իր մեջ և ստեղծել կապի թելեր համընդհանուր հոգու հետ, որի շարժիչն ու գեներատորը ինքնազոհաբերված Քեյսին է: Սա վեպի կարևորագույն դրվագն է, Թոմ Ջոուդի պայծառացման դրվագը, երբ վերջինս գիտակցական նոր մակարդակի է հաս-

11 Ստայնբեք Ջոն, «Ցասման ողկույզները», «Հանգակ» հրատ., Երևան, 2017թ., էջ 29:

12 Ստայնբեք Ջոն, «Ցասման ողկույզները», «Հանգակ» հրատ., Երևան, 2017թ., էջ 438:

նում և տեսնում ակունքն ու իմաստը, հստակորեն զգում, որ փաղանգի մի մասն է ու այդ անսպառ գաղափարի ծանրության կրողը, որի բանալին իր համար եղել է Քեյսին, որն այդ պահին էլ կենդանի է ու խոսում է, քանի որ կենդանի է հենց ինքը Թոմը՝ «նոր» կրոնի շարունակողը. «Հասկանում ես: Տե՛ր Աստված, ոնց որ Քեյսին խոսի: Որովհետև նրա մասին շատ մտածեցի: Մեկ-մեկ էլ ասես կանգնած է աչքիս առաջ¹³»:

Եվ այս «նոր կրոնը» ներքին նյարդով տիրում է Ջոուդների ամբողջ ընտանիքին՝ Մա-ին, որ համայն մայր բնության խորհրդանիշն է, և նրա «ընտանիքը» բոլորն են, Ռոզաշարը, որ կերակրում է սոված անծանոթին և նրան փրկում և վերջապես Պա-ին, որ վեպի սկզբում միայն իր դարդով է տապակվում, միայն իր ընտանիքի խնդիրներով է մտախոգ, սակայն հետագայում հասկանում է, որ անհրաժեշտ է համագործակցել այլոց հետ. «Պան մատով կոր գիծ քաշեց օդի մեջ: / - Եթե բոլորս բաժնեմք, դուրս գանք ու պատնեշ սարքենք, գրագ կգամ, որ ջրի դեմը կառնենք: Այ՛ն փողից մինչև էստեղ: / - Հա՛, - համաձայնվեց հորեղբայր Ջոնը: - Կարող է պատահել: Բայց մյուսներն էլ կգան: Թե՛ կասեն, որ ավելի լավ է ուրիշ տեղ գնանք»¹⁴:

Իսկ վերջաբանի փոխարեն հարկ ենք համարում ներկայացնել վեպի վերջին տողերը, որ Ստայնբեք-հոգեբանի, նրա զգայական գրելատեխնիկայի բացառիկության լավագույն ապացույցն են և վեր են բոլոր տեսություններից ու գրական բանաձևումներից: Ռոզաշարը, որ հենց նոր է կորցրել երեխային, ինքն էլ կիսասոված ու անձրևից թրջված է, իր մեջ ուժ է գտնում և կրծքի կաթը, որ կյանքի ու դրա շարունակականության խորհրդանիշն է, տալիս է անծանոթ մի ծերունու՝ փրկելով վերջինի կյանքն ու միևնույն ժամանակ իր ներսում կենսական ուժերի տարօրինակ-հակասական ու խորհրդավոր-էրոտիկ մի թրթիռ զգում. «Ռոզաշարը մի քանի րոպե անշարժ ստեղծ շշնջացող մարագում: Ապա դժվարությամբ բարձրացրեց հոգնած մարմինն ու փաթաթվեց ծածկոցով: Դանդաղ քայլեց դեպի անկյունը, կանգ առավ և ցած նայեց հյուծված դեմքին, լայն բացված, վախեցած աչքերին: Եվ

13 Ստայնբեք Ջոն, «Ցասման ողկույզները», «Չանգակ» հրատ., Երևան, 2017թ., էջ 439:

14 Ստայնբեք Ջոն, «Ցասման ողկույզները», «Չանգակ» հրատ., Երևան, 2017թ., էջ 455:

անշտապ պառկեց նրա կողքին: Տղամարդը դանդաղ տարուբերեց գլուխը: Ոռգաշարն արձակեց ծածկոցի ծայրն ու մերկացրեց կուրծքը: / - Պարտավո՛ր ես, - ասաց, սեղմվեց նրան և նրա գլուխը սեղմեց իր կրծքին: - Այդպե՛ս, լա՛վ է: - Ձեռքը դեպի նրա ծոծրակը տարավ, որպեսզի օգնի: Մատները նուրբ շոյում էին նրա մազերը: Հետո վերև նայեց, և շրթունքները սեղմվեցին ու ժպտացին խորհրդավոր»¹⁶:

Բանալի բառեր. - «փաղանգի տեսություն», «նոր կրոն», «կոլեկտիվ անգիտակցական», տրանսգենդենտալ հոգի, սոցիալ-փիլիսոփայական վեպ, անհատ:

Vahe Arsenyan
Рефлексия "теории фаланги" Джона Стейнбека в его романе
"Гроздь Гнева"

Резюме

В данной статье анализ романа Джона Стейнбека "Гроздь Гнева" проводится на основе "теории фаланги", сущность которой Стейнбек раскрыл в своей статье "Аргумент фаланги", которая так и не была опубликована. Автор настоящей статьи рассматривает также идею трансцендентальной души, которая стала глотком свежего воздуха в американской литературе 19-20вв.

Ключевые слова: «Теория сокола», «новая религия», коллективное бессознательное, трансцендентная душа, социально-философский роман, индивид.

Vahe Arsenyan
"Reflecton of John Steinbeck's "Phalanx theory" in his novel
"Grapes of Wrath"

Summary

In the given article the study of the novel "Grapes of Wrath" by John Steinbeck is based on the "Phalanx theory", which was touched upon by Steinbeck in his article "Argument of Phalanx", which had never been published. In the present article the reference is also made to the idea of *transcendental soul*, which brought a breath of fresh air to the American literature of 19th and 20th centuries.

Keywords: The theory of falcon, new religion, collective unconscious, transcendental soul, social-philosophical novel, individual.